ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՆԱԽԱՁԵՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6–րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը որոշեց.

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ԴԵՂ/2024/Ա-21 ծածկագրով ընթացակարգի մասնակից «ԷՍԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊ ընկերությանը, ինչպես նաև ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ԴԵՂ/2024/Ա-22 ծածկագրով ընթացակարգի մասնակից ԱՆՆԱՐԿԱ ՍՊ ընկերությանը ներառել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ): Որոշման հիմք է հանդիսացել ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքները միմյանց հետ փոխկապակցված՝ «Աննարկա» (ՀՎՀՀ՝ 02656691), «Էսզեթ ֆարմա» (ՀՎՀՀ՝ 00433863) և «Էսզեթ ֆարմ» (ՀՎՀՀ՝ 00498192) ՍՊ ընկերությունների կողմից հանրային գնումների գործընթացներին ոչ բարեխիղճ վարք դրսևորելու վերաբերյալ:

Համաձայն որի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին (ներառված է 06/05/2023թ. մինչև 20/06/2025թ.) գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված են «Էսզեթ ֆարմ» և «Աննարկա» ՍՊԸ-ները:

Մասնավորապես՝ համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի՝ Ընկերության իրական շահառուն և 100 տոկոս բաժնետերը 2022 թվականի սեպտեմբերի 12-ից մինչև 2023 թվականի նոյեմբերի 23-ը հանդիսացել է Երեմ Արկադիի Սարգսյանը (ՀԾՀ՝ 1101770244):

Տեղեկագրում հրապարակված գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկի համաձայն՝ «Աննարկա» ՍՊ ընկերությունը 2023 թվականի փետրվարի 10-

ից մինչև 2025 թվականի փետրվարի 10-ը «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի հիմքով ներառվել է գնումների գործընթացներում իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2023 թվականի մարտի 18-ի թիվ ԵԴ/2925/02/23 որոշման հիման վրա՝ մինչև տվյալ գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, 2023 թվականի մարտի 23-ից հանվել է Ցուցակից:

2022 թվականի սեպտեմբերի 12-ից մինչև 2023 թվականի մայիսի 11-ը Երեմ Արկադիի Սարգսյանին 100 տոկոս բաժնետիրական իրավունքով է պատկանել նաև «Էսզեթ ֆարմա» ՍՊ ընկերությունը: Համաձայն տեղեկագրում հրապարակված տեղեկատվության՝ «Էսզեթ ֆարմա» ՍՊ ընկերությունը 2023 թվականի մայիսի 6-ից մինչև 2025 թվականի հունիսի 20-ը ներառյալ ընդգրկվել է Ցուցակում: Ցուցակում ընդգրկվելու պահի դրությամբ «Էսզեթ ֆարմա» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնետերը և իրական շահառուն հանդիսացել է նույն Երեմ Սարգսյանը: Վերջինս, «Էսզեթ ֆարմա» ՍՊ ընկերության Ցուցակում ընդգրկվելու պահին հանդիսացել է նաև «Աննարկա» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնետերը և իրական շահառուն: Ցուցակում ընդգրկվելուց հետո Երեմ Սարգսյանը «Էսզեթ ֆարմա» ՍՊ ընկերության 100 տոկոս մասնաբաժինը օտարել է Խաչատուր Հունանյանին և համաձայն ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգի՝ 2023 թվականի մայիսի 11-ից ընկերության 100 տոկոս ուղղակի մասնակցությամբ իրական շահառու է հանդիսանում Խաչատուր Հունանյանը:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետի «ա.» պարբերության՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝ տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրինող մասնակից:

Կարգի 121-րդ կետով՝ մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար

հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ.» պարբերությամբ և 19-րդ ենթակետով՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին:

Այսպես՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա.» ենթակետով՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Համաձայն Կարգի 119-րդ կետի 2-րդ ենթակետի՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրինող մասնակից,

բ.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի:

Կարգի 120-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 119-րդ կետի իմաստով ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, թոռները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները:

Ընթացակարգի հրավերի մաս 1-ի 8.13 կետի համաձայն՝ «Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: (...)»:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՀՀ ՆԳՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

«17» «09» 2024թ.